

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Պատմության օլիմպիադայի հանրապետական փուլ (2019-2020 ուստարի)
10-րդ դասարան (տևողությունը՝ 180 րոպե)

ա) Հայոց պատմություն (20 միավոր)

1. Ո՞ր լեռներից է սկիզբ առնում Արևմտյան Եփրատը. 0,5 մ.
ա/ Ծաղկավեռ բ/ Ծաղկանց
գ/ Սրմանց դ/ Խաչափայտ
2. Ո՞րքան է Փոքր Հայքի տարածքը. 0,5 մ.
ա/ մոտ 300 հազ. քառ. կմ բ/ մոտ 80 հազ. քառ. կմ
գ/ մոտ 100 հազ. քառ. կմ դ/ մոտ 50 հազ. քառ. կմ
3. Ե՞րբ է գրի առնվել հայերի ծագման վրացական ավանդությունը. 0,5 մ.
ա/ V-VII դդ. բ/ VIII-X դդ.
գ/ VII-IX դդ. դ/ IX-XI դդ.
4. Ե՞րբ է Արդինի-Մուսասիր երկիրը ներառվել Վանի թագավորության մեջ. 0,5 մ.
ա/ Ք.ա. 830-ական թթ. վերջ բ/ Ք.ա. 820-ական թթ. սկիզբ
գ/ Ք.ա. 820-ական թթ. վերջ դ/ Ք.ա. 810-ական թթ. սկիզբ
5. Ո՞վ է հաջորդել Կյուրոս II Մեծին. 0,5 մ.
ա/ Կամբիզ բ/ Արախա
գ/ Բարդիա դ/ Դարեհ I
6. Արտաշես I-ը չորս զորավարություններ է ստեղծել, որոնցից հարավայինը վստահել է՝ 0,5 մ.
ա/ իր որդի Տիրանին բ/ իր որդի Զարեհին
գ/ իր որդի Արտավազդին դ/ իր զորավար Սմբատին
7. Հռոմեա-պոնտական պատերազմներն ավարտվել են՝ 0,5 մ.
ա/ Ք.ա. 89 թ. բ/ Ք.ա. 83 թ.
գ/ Ք.ա. 71 թ. դ/ Ք.ա. 69 թ.
8. Վանի թագավորությունում պետության բոլոր աստվածություններին կարգադրվում էր զոհեր մատուցել՝ 0,5 մ.
ա/ Շիվինիի ամսին բ/ Խալդիի ամսին
գ/ Թեյշեբայի ամսին դ/ Արուբանիի ամսին
9. Գնեսու Պոմպեոսն Արևելք է ժամանել՝ 0,5 մ.
ա/ Ք.ա. 67 թ. գարնանը բ/ Ք.ա. 67 թ. աշնանը
գ/ Ք.ա. 66 թ. գարնանը դ/ Ք.ա. 66 թ. աշնանը
10. Պոնտոսի ո՞ր քաղաքի մոտ են հայ-պոնտական ուժերը փայլուն հաղթանակ տարել հռոմեացիների նկատմամբ: 0,5 մ.
11. Ք.ա. 66 թ կնքված հայ-հռոմեական պայմանագրի համաձայն՝ Մեծ Հայքը ո՞ր տարածաշրջանում էր պահպանում իր նվաճումները: 0,5 մ.
12. Ո՞ր բլրի վրա տարածվող Վարդգեսավան գյուղաքաղաքն է Վաղարշ I-ի օրոք զարգացել և վերածվել մեծ քաղաքի: 0,5 մ.
13. Դասավորե՛ք ժամանակագրական ճիշտ հաջորդականությամբ. 1 մ. (1 սխալի դեպքում՝ 0 մ.)
ա/ Վանի թագավորության զորքերի առաջին հաղթարշավը դեպի հարավ՝ մինչև Պարսուա (Պարսք) և Բաբելոնի երկիր բ/ Թիգլաթպալասար III-ի արշավանքը դեպի Տուշպա
գ/ Վանի թագավորության զորքերի դուրս գալը Միջերկրական ծովի արևելյան ավազան դ/ Դիաուխի (Տայք) երկրի հարկատու դառնալը Վանի թագավորությանը

- ե/ Վանի թագավորության միասնական դիցարանի ստեղծումը
 գ/ Վանի թագավորության տարածքների ասպատակումը կիմերների ցեղեր կողմից
 է/ Մելիտեայի (Մելիդ, Մալաթիա) հարկատու դառնալը Վանի թագավորությանը
 ը/ Սարգոն II-ի զորքերի կողմից Արդինի-Մուսասիրի գրավումը

1	2	3	4	5	6	7	8

14. Կազմե՛ք համապատասխան զույգեր.

1,5 մ. (6 X 0,25 մ.)

1. Վահան Մամիկոնյան
2. Համազասպ Մամիկոնյան (Հայոց իշխան)
3. Վարդ Պատրիկ
4. Արշակ II
5. Խոսրով IV
6. Խոսրով III Կոտակ

1	2	3	4	5	6

ա. Վրթանես Ա Պարթև

բ. Ներսես Ա Պարթև

գ. Սահակ Պարթև

դ. Հովհաննես Ա Մանդակունի

ե. Բաբգեն Ա

զ. Ներսես Գ

15. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 ճիշտ պնդումները:

1,5 մ. (3 X 0,5 մ.)

ա/ Հայ առաքելական եկեղեցու առաջնորդական աթոռները, մինչև Սբ. Գրիգոր Լուսավորչի կողմից Հայոց եկեղեցական նվիրապետության հաստատման ժամանակները, Եղեսիայում, Արտազում, Սյունիքում և Արցախում էին:

բ/ Հնում հայոց նախնիների պատկերով Արմավիրում կանգնեցված և այնտեղից Բագարան, այնուհետև Վաղարշապատ տեղափոխված արձանները Որմիզդ-Արտաշիրը հրամայում է փշրել, ինչպես նաև Արտաշես I-ի սահմանաքարերի գրությունները փոխել իր անունով:

գ/ Տեղեկանալով, որ Գրիգորը Տարոնում է, Տրդատ Մեծը, Աշխեն թագուհին, Խոսրովի դուստրը և հայոց զորքը գնում են նրան ընդառաջ, հասնում են Բագավան՝ Նպատ լեռան ստորոտը, և մեծ պատիվներով դիմավորում Տարոնից այնտեղ եկած կաթողիկոսին:

դ/ Մեծ Հայքի թագավորության ժամանակաշրջանում գոյություն են ունեցել չորս բղեշխություններ՝ Աղձնիքի, Ծոփքի, Կորդուքի և Գուգարքի:

ե/ Մաղխագության վարչությունը գլխավորում էր մաղխագը՝ արքունիքի և թագավորական պահակազորի հրամանատարը, որին պատերազմի ժամանակ ենթարկվում էր նաև աշխարհագորը:

զ/ Թագավորական արքունիքը և այրուծին պահվում էին հիմնականում գանձարանի միջոցներից կատարվող դրամական և բնամթերք նպաստի՝ ռոճիկի վճարումներով:

է/ Հայ եկեղեցուն տնտեսապես ապահովելու նպատակով Տրդատ III-ը գյուղական եկեղեցիների քահանաներին բոլոր ագարակ տեղերում տալիս է չորսական, իսկ ավաններում՝ յոթական ծխի հողաբաժին:

ը/ Մեծ Հայքի Փայտակարան աշխարհի նույնանուն քաղաքի վերակացուների խնդրանքով Տրդատ թագավորն այդ կողմերի եպիսկոպոս է հաստատում Արիստակեսի որդուն՝ Գրիգորիսին, որի հոգևոր իշխանության տակ էին Արցախը, Ուտիքը և Փայտակարան աշխարհը, ինչպես նաև Վիրքի և Աղվանքի եպիսկոպոսությունները:

1	2	3

16. Ընտրե՛ք տերմինների 2 ճիշտ բացատրությունները:

1 մ. (2 X 0,5 մ.)

ա/ «Ժամանակ անիշխանություն» – այդպես է բնութագրում Մովսես Խորենացին Հայ Արշակունյաց թագավորության անկմանը հաջորդած տասնամյակները:

բ/ «Նոր քաղաք» – այդպես էր կոչվում Խոսրով Կոտակի օրոք հիմնադրված Արշակունյաց թագավորության նոր մայրաքաղաք Դվինը:

գ/ *Բդեշխներ* – սահմանապահ զորավարությունների կուսակալներ, որոնք հսկում և պաշտպանում էին Հայոց երկիրը արտաքին հարձակումներից:

դ/ *Ոստանիկ այրուձի* – թագավորական ոստանի պաշտպանությունն իրականացնող, արքունիքին կից հատուկ հեծյալ ջոկատներից կազմված զորք:

ե/ *Հայոց մեծ թվական* – Արեգակնային օրացույցի հիմքով տոմարական համակարգ (սկիզբ է համարվել Ք.ա. 2492 թ. օգոստոսի 11-ը):

զ/ *Զրադաշտականություն* – դուալիստական (երկմիասնական) կրոն, որի հետևորդները հավատում էին, թե գոյություն ունեն համազոր երկու գերագույն աստվածներ՝ Երկնքի և Երկրի տիրակալներ:

է/ *Իշխանաց իշխան* – Հայաստանի, Վիրքի, բուն Աղվանքի և Մերձկասպյան շրջանների՝ արաբական խալիֆի կողմից հաստատվող կառավարիչ:

1	2

17. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 սխալ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)

ա/ 354 թ. Տարոն գավառի Աշտիշատ գյուղում գտնվող Մայր եկեղեցում Ներսես Ա-ն հրավիրում է Հայ եկեղեցու առաջին ժողովը:

բ/ Պարսից Շապուհ արքայի և հռոմեական կայսր Հուլիանոս Ուրացողի միջև 363 թ. կնքված պայմանագրով կայսրը պարտավորվում է չօգնել հայերին:

գ/ Պապը հռոմեական զորավար Տրայանոսի գլխավորած մի զորաջոկատով վերադառնում է Մեծ Հայք և հաստատվում հայոց գահին:

դ/ Վարազդատի հեռանալուց հետո Մանվել Մամիկոնյանի խնամակալությամբ հայոց գահին հաստատվում են Արշակն ու Վաղարշակը՝ Պապի որդիները:

ե/ 385 թ. պարսից արքան հայ Արշակունիների տոհմից Խոսրովին ուղարկում է Հայաստան:

զ/ Խոսրով IV-ը, Թեոդոսիոս I-ի համաձայնությամբ որոշ ժամանակ հարկ վճարելով, իշխում էր նաև Հայաստանի արևմտյան մասի վրա:

է/ Վռամշապուհ արքայի հետ խորհրդակցելով՝ Սահակ Պարթևը մեկնում է պարսից արքունիք և ստանում Վռամ IV-ի համաձայնությունը Համազասպ Մամիկոնյանին (Սահակ Պարթևի դստեր՝ Սահականույշի ամուսնուն) հայոց սպարապետ նշանակելու մասին:

ը/ Հայ նախարարների խնդրանքով Հազկերտ I-ի կողմից թագավոր հաստատված Խոսրով IV-ը ութ ամիս անց մահանում է, որից հետո Մեծ Հայքում գահակալում է Վռամշապուհի որդին՝ Արտաշեսը:

1	2	3

18. Գտե՛ք և ուղղե՛ք սխալը. 1 մ. (2 X 0,5 մ.)

Տիգրանից վերադարձած հայ նախարարները՝ մարզպան Վասակ Սյունին, սպարապետ Վարդան Մամիկոնյանը, բոլորը միաբերան «Սրբազան ուխտի» երդում են տալիս:

19. Կարդացե՛ք սկզբնաղբյուրից մեջբերումը և պատասխանե՛ք հարցերին. 1,5 մ. (3 X 0,5 մ.)

«Եվ տիրապետեց նա բազմաթիվ բերդերի և գավառների Վայոց ձորի, Խաչենի և Փառիսոսի սահմաններում՝ ավելի, քան իր եղբայրը, և չկար մեկը, որ սարսափ պարճառեր Հայաստանին»:

ա. Ո՞ր պատմիչի աշխատությունից է մեջբերումը:

բ. Ո՞ր արքայի մասին է խոսքը:

գ. Ո՞վ էր արքայի՝ հեղինակի կողմից հիշատակվող եղբայրը:

20. Լրացրե՛ք տեքստում բաց թողնված հատվածները. 1,5 մ. (3 X 0,5 մ.)

Արարտայի արքան միաժամանակ երկրի գերագույն ... -ն (1) էր: Երկրի կարևորագույն հարցերի լուծման համար նա գումարում էր ... (2): Հիշատակվում է երկրի գլխավոր տնտեսական պաշտոնյան, որը կոչվում էր «...» (3):

21. Տրամաբանական խնդիր.

1 մ.


Եթե Հայկական լեռնաշխարհում հնագիտական պեղումներից գտնված իրը 7000 տարեկան է, նախնադարի կոնկրետ ո՞ր պարբերափուլի (ժամանակաշրջանի) ընթացքում է ստեղծվել:

22. Աշխատանք Մեծ Հայքի ուրվագծային քարտեզի հետ.

1 մ. (2 X 0,5 մ.)

ա. Ո՞ր աշխարհն (նահանգն) է գունանշված:

բ. Ո՞ր աշխարհն է նրան սահմանակցում հյուսիսարևմտյան երկայնքով:



23. Տիգրանյան թագավ Մեծ Հայքի ո՞ր արքայի դիմանկարով դրամն է պատկերված. 0,5 մ.



24. Աշխատանք պատմական ծաղրանկարի հետ (կարդացե՛ք հակիրճ մեկնաբանությունը և պատասխանե՛ք տրված հարցերին). 1 մ. (2 X 0,5 մ.)

1897 թ. փետրվարին ֆրանսիական Le Grelot պարբերականի շապիկին հայտնվել է այս լուսանկարը, որի նպատակն էր կոչ անել ֆրանսիական իշխանություններին միջամտել Օսմանյան կայսրությունում կատարվող իրադարձություններին:

ա. Ո՞ր միապետն է պատկերված նկարի կենտրոնում:

բ. Հայերի դեմ ո՞ր իրադարձությունն է տեղ գտել այս ծաղրանկարում:



բ) Համաշխարհային պատմություն (10 միավոր)

1. Քաղդեացի ո՞ր ցեղապետն է Ք.ա. 626 թ. թագադրվել որպես Բաբելոնիայի արքա. 0,5 մ.
ա/ Նաբոպալասար բ/ Նաբուգոդոնոսոր գ/ Նաբոնիդ դ/ Աշշուրբանիպալ
2. Աթենական պետության ո՞ր քաղաքական գործիչն է մտցրել օստրակիզմը. 0,5 մ.
ա/ Սոլոն բ/ Պիսիստրատ գ/ Կլիսթենես դ/ Պերիկլես
3. Ե՞րբ է տեղի ունեցել Պլատեայի վճռական ճակատամարտը հունական միացյալ բանակի և պարսիկների միջև. 0,5 մ.
ա/ Ք.ա. 490 թ. բ/ Ք.ա. 480 թ. գ/ Ք.ա. 479 թ. դ/ Ք.ա. 449 թ.
4. Ո՞ր քաղաքում է Պիպին Կարճահասակը հռչակվել թագավոր. 0,5 մ.
ա/ Սուասոն բ/ Պուատիե գ/ Հռոմ դ/ Մարսել
5. Ո՞ր լեզվով են գրված հնդկական «Մահաբհարաթա» և «Ռամայանա» վիպերգությունները. 0,5 մ.
6. Համապատասխանեցրե՛ք. 1 մ. (4 X 0,25 մ.)
 1. Պատմագրություն
 2. Հռետորական արվեստ
 3. Բժշկագիտություն
 4. Աստղագիտություն

ա. Էմպեդոկլես բ. Թուկիդիդես
գ. Հիպարքոս դ. Դեմոսթենես

1	2	3	4

7. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 ճիշտ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)
ա/ Ք.ա. 221 թ. արքա Ին Չժենը հաղթեց իր հակառակորդներին, ընդունեց Հուանդի տիտղոսը և այդուհետև սկսեց կոչվել Ցին Շի Հուանդի՝ «Ցինի առաջին կայսր» (Ք.ա. 246-210 թթ.):
բ/ 962 թ. Օստոն Լ-ի որդի Հենրիխ Լ-ը արշավեց Հռոմ և թագադրվեց որպես կայսր:
գ/ 1206 թ. Կենտրոնական Ասիայից եկած ցեղերը Հյուսիսային Հնդկաստանում ստեղծեցին մուսուլմանական հզոր պետություն, որը ստացավ Մեծ Մողոլի սուլթանություն անունը:
դ/ 1206 թ. հրավիրված համամոնղոլական առաջին ղուրուլթայում (համագումարում) Թեմուչինը հռչակվեց համամոնղոլական տիրակալ՝ ստանալով Չինգիզ խան անունը:

ե/ 1613 թ. Մոսկվայում հրավիրվեց Երկրային ժողով, որը նոր ցար ընտրեց Միխայիլ Ռոմանովի որդուն՝ Ալեքսեյ Ռոմանովին (1613-1645 թթ.):

զ/ Ինկերի կայսրության մայրաքաղաքը Կուսկոն էր՝ շուրջ 200 հազար բնակչությամբ, որտեղ գտնվում էր ինկերի գերագույն աստծո՝ Արևի տաճարը:

1	2	3

8. Թվարկե՛ք՝

2 մ. (4 X 0,5 մ.)

ա. Երուսաղեմի թագավորությանը ենթակա խաչակրաց պետություններից 2-ը,

բ. Նրանց պաշտպանության համար ստեղծված հոգևոր-ասպետական միաբանություններից 2-ը:

9. Աշխատանք **1648 թ.** Եվրոպայի ուրվագծային քարտեզի հետ.

1 մ. (2 X 0,5 մ.)



1. Արևելյան Եվրոպայի ո՞ր միացյալ պետական կազմավորումն է պատկերված:

2. Ո՞ր պետությանն էր պատկանում Բալկանյան թերակղզու զգալի մասը:

10. Միջնադարյան Եվրոպայի ո՞ր նշանավոր գործչի նկարն է պատկերված ստորև.

0,5 մ.



11. Աշխատանք պատմական ծաղրանկարի հետ.

1,5 մ. (3 X 0,5 մ.)



ա. Ո՞ր պետության դեմ տարած հաղթանակի արդյունքում Եվրոպայի վերաբաժանումն են քննարկում պատկերված անձինք:

բ. Նշե՛ք պատկերված պետական գործիչներից 2-ի անունը և ազգանունը:

Հանրապետական օլիմպիադայի
հանձնաժողովի նախագահ՝

ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի դոցենտ,
պատմ. գիտ. թեկնածու Մ. Մալխասյան

09.03.2020 թ.